ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

23 հունվարի 2019 թ. № 13 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «ժ.1» կետերի՝ *հրամայում եմ*՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության գյուղական մարզական խաղերի (այսուհետ՝ Խաղեր) կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 2 աղյուսակի «1163 Մասսայական սպորտ» ծրագրի «11010 «ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում» միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված № 1
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2019 թվականի հունվարի 23-ի
№ 13-Ա/1 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2019 թվականին անցկացվող Հայաստանի Հանրապետության գյուղական մարզական խաղերի (այսուհետ՝ Խաղեր) նպատակն է՝ բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, մարզերի գյուղական բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում:

2. Խաղերի խնդիրներն են՝

1) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում,

2) բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում,

3) մարզերում գյուղական բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում,

4) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում:

II. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

3. Խաղերն անցկացվելու են 2019 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսներին՝ 3 փուլով. 1-ին փուլը՝ գյուղերում, 2-րդ փուլը՝ մարզկենտրոններում, 3-րդ՝ եզրափակիչ փուլը՝ Վանաձոր քաղաքում:

1) 1-ին փուլն անցկացվելու է հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի Հանրապետության գյուղերում:

2) 2-րդ փուլն անցկացվելու է օգոստոսի 10-20-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Մասնակցում են գյուղերի 1-ինից 3-րդ տեղերը գրաված մարզիկները (3 տղա, 3 աղջիկ և 1 ներկայացուցիչ, անցկացման համար մարզին տրվում է 2 օր):

3) 3-րդ՝ եզրափակիչ փուլն անցկացվելու է սեպտեմբերի 3-6-ը Վանաձոր քաղաքում՝ Հայաստանի Հանրապետության 10 մարզերի հավաքական թիմերի միջև: Թիմի կազմը՝ 7 տղա, 3 աղջիկ և 1 ներկայացուցիչ:

III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Խաղերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

5. Խաղերի 1-ին փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են համապատասխան համայնքապետարանների կողմից ստեղծված համապատասխան կազմկոմիտեները:

6. Խաղերի 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից ստեղծված համապատասխան կազմկոմիտեները:

7. Եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

IV. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

8. Խաղերին կարող են մասնակցել 18 և ավելի բարձր տարիքի տղամարդիկ և 16-ից բարձր տարիքի աղջիկներ ու կանայք, որոնք համայնքի գյուղական բնակավայրերի բնակիչներ են: Գործող մարզիկները խաղերին չեն կարող մասնակցել:

9. Մասնակցության պայմաններն են՝ խաղերի 1-ին փուլին կարող են մասնակցել ցանկություն ունեցող այն անձինք, որոնք ունեն համապատասխան ֆիզիկական պատրաստություն, բժշկի թույլտվություն և տեղեկանք բնակության վայրից:

10. Խաղերի 2-րդ՝ մարզային փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների գյուղական բնակավայրերից համալրված հավաքական թիմերը:

11. Խաղերի 3-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների գյուղական բնակավայրերի բնակիչներով համալրված հավաքական թիմերը:

V. ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. ***Խաղերի ծրագիրը՝***

№	Մարզաձևը	Մասնակիցների թիվը			Ընդամենը
		Տղա	Աղջիկ	Ներկայացուցիչ, մարզիչ	
1.	Հնգամարտ	7	3	1	11

13. ***Հնգամարտ:*** Եզրափակիչ խաղերն անցկացվելու են՝ ***տղաներ՝*** վազք 100 մետր, հեռացատկ տեղից, վազք 1000 մետր, ձգումներ պտտաձողից (կախ դրությունից) և թենիսի գնդակի նետում, ***աղջիկներ՝*** վազք 50 մետր, հեռացատկ տեղից, վազք 500 մետր, ձեռքերի ծալում և ուղղում մարզանստարանին, հենում պառկած դրությունից, թենիսի գնդակի նետում:

14. Խաղերի 1-ին և 2-րդ փուլերի մրցումների անցկացման մրցակարգը տեղերում որոշում են մարզպետարանների, համայնքապետարանների կողմից ստեղծված համապատասխան կազմկոմիտեները:

15. Խաղերի 3-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներն անցկացվելու են ատլետիկայի միջազգային կանոնների համաձայն.

1) Խաղերում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը միավորների հաշվարկում հինգ մարզաձևերից հավաքում է առավելագույն գումար, միաժամանակ որոշվում են առանձին մարզաձևերի հաղթողները (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը),

2) առանձին մարզաձևերում մարզիկների ցուցաբերած արդյունքների հավասարության դեպքում առավելությունը տրվում է ավելի մեծ տարիք ունեցող մասնակցին,

3) ընդհանուր թիմային հաշվարկը որոշվում է թիմի 10 անդամների կողմից ձեռք բերված ընդհանուր միավորների առավելագույն գումարով:

16. Թիմերի արդյունքների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է առանձին մարզաձևերում առավել 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր գրաված մարզիկ ունեցող թիմին:

17. Հնգամարտի և թիմային հաշվարկները որոշվում են՝ համաձայն աղյուսակի.

Աղյուսակ

Տղաներ, աղջիկներ	
Գրաված տեղը	Միավորը
1	55
2	50
3	45
4	40
5	36
6	33
7	30
8	27
9	24
10	22
11	20
12	19
13	18
14	17
15	16
16	15
17	14
18	13
19	12
20	11
21	10
22	9
23	8
24	7
25	6
26	5
27	4
28	3
29	2
30+	1

VI. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

18. Խաղերի 2-րդ փուլի մրցումներին մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված թիմերին և անհատ մարզիկներին տրվում են Նախարարության հավաստագրեր:

19. Խաղերի 3-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներին անհատական մարզաձևերում և ընդհանուր հնգամարտի հաշվարկում մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզիկներին տրվում են Նախարարության հավաստագրեր, պարգևատրվում են դրամական մրցանակներով, մեդալներով:

20. Խաղերի 3-րդ՝ եզրափակիչ փուլի ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված թիմերին տրվում են հավաստագրեր, պարգևատրվում են Նախարարության մարզագույքով և գավաթներով:

VII. ԾԱԽՍԵՐԸ

21. Խաղերի 1-ին փուլի կազմակերպման, անցկացման և 2-րդ փուլի գործուղման ծախսերը հոգում են համապատասխան համայնքապետարանները:

22. Խաղերի 2-րդ փուլում անհատական մարզաձևերից մրցանակային տեղեր գրաված անձանց, թիմերին Նախարարության կողմից տրվում են հավաստագրեր: Մրցավարների օրապահիկի ծախսերը հոգում է Նախարարությունը, իսկ ճանապարհածախսը հոգում է համապատասխան գործուղող կազմակերպությունը:

23. Եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը (մրցավարների գործուղում, գիշերավարձ, օրապահիկ, ճանապարհածախս, մրցավարներին դրամական պարգև), մասնակից թիմերի գործուղումը (գիշերավարձ, օրապահիկ, ճանապարհածախս), մասնակից թիմերի տրանսպորտային ծախսերը Վանաձոր քաղաքում և մարզակառույցների վարձակալման ծախսերը հոգում է Նախարարությունը: Անհատական մարզաձևերում մրցանակային տեղեր գրաված անձանց Նախարարության կողմից տրվում են հավաստագրեր, պարգևատրվում են դրամական մրցանակներով. առաջին տեղը՝ 60.000 դրամով, երկրորդ տեղը՝ 50.000 դրամով, երրորդ տեղը՝ 40.000 դրամով: Հնգամարտի մրցույթում առաջին տեղը գրաված մարզիկը՝ 120.000 դրամով, երկրորդ տեղը՝ 100.000 դրամով, երրորդ տեղը՝ 70.000 դրամով, հավաստագրերով և մեդալներով: Ընդհանուր թիմային հաշվարկով մրցանակային տեղեր գրաված մարզերը պարգևատրվում են գավաթներով, տրվում են հավաստագրեր: Ընդհանուր թիմային հաշվարկով մրցանակային տեղեր գրաված մարզերին տրվում են հավաստագրեր, պարգևատրվում են գավաթներով, առաջին տեղը՝ 500.000, երկրորդ տեղը՝ 400.000 և երրորդ տեղը՝ 300.000 դրամի համարժեք մարզագույքով:

VIII. ՀԱՅՏԵՐԸ

24. Խաղերի 1-ին փուլին մասնակցելու համար կարող են դիմել համապատասխան համայնքապետարաններ մինչև մայիսի 30-ը:

25. Խաղերի 2-րդ փուլի մասնակցության հայտերը համայնքապետարանները ներկայացնում են մարզպետարանների համապատասխան վարչություններ կամ բաժիններ մինչև տվյալ տարվա օգոստոսի 5-ը ներառյալ:

26. Խաղերի եզրափակիչ փուլին մասնակցելու հայտերը մարզպետարանը մինչև 2019 թվականի օգոստոսի 25-ը ներառյալ պետք է ներկայացնի Նախարարություն

(Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Աբովյան 9 հասցեով, հեռախոսահամար՝ (011) 52-28-53): Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

27. Եզրափակիչ փուլի ընդունելության օրը մարզպետարանը պետք է ներկայացնի հայտ՝ հաստատված մարզպետարանի և բժշկի կողմից, իսկ մասնակիցները պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով (անձնագիր):

IX. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28. Սույն կանոնակարգում չնշված վիճելի հարցերի դեպքում Նախարարությունը կայացնում է իրավունքի, արդարության, անկողմնակալության և ազնվության սկզբունքների վրա հիմնված որոշում:

29. Նախարարության կայացրած որոշումները պարտադիր են Խաղերին մասնակցող բոլոր թիմերի համար:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԷԼՈՅԱՆ